ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# «ՈՒՂՂԱՓԱՌ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՇԱՐԺՄԱՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԺՈՂՈՎ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 8-12-ը Վոլոսում (Հունաստան) Հույն Ուղղափառ Եկեղեցու հրավերով Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը կազմակերպել էր ժողով՝ նվիրված էկումենիկ շարժման մեջ ուղղափառ կանանց մասնակցությանը:

Ժողովի խորագիրն էր. «Եվ այնտեղ շատ կանայք կային...(Մատթ. ԻԷ 55). Ուղղափառ կանանց մասնակցությունը էկումենիկ շարժմանը՝ անցյալը, ներկան և ապագան»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցեց ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի անդամ երեցկին Փոլա Դևեջյանը:

Հավաքի նպատակն էր առավել գործուն դարձնել ուղղափառ կանանց ներգրավվածությունը էկումենիկ շարժման մեջ և էլ ավելի մեծացնել և զորացնել կանանց դերը էկումենիկ շարժման մեջ:

Ժողովի ընթացքում երեցկինը հանդիպումներ ունեցավ ժողովին մասնակից տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ, նրանց հետ կիսեց իր փորձառությունը Եկեղեցում կնոջ բերած ծառայության ավանդական տեղի և դերի մասին՝ դրանք ներկայացնելով ժամանակակից մարտահրավերների լույսի ներքո:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ*